Արձանագրություն N 4
ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 հուլիսի 2017թ
ժամը 10:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ն. Կիրակոսյանը
անդամ՝ Մ. Ստեփանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Բացակայում էր՝ հանձնաժողովի անդամ՝ Ա. Նավասարդյանը

Օրակարգ
1. Հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին
2. Ընթացակարգի հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Ն. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Հրավերով սահմանված ժամկետում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակցի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց.
ա/ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
ա/ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ -ին ընտրված մասնակից ճանաչել 1-ին չափաբաժնի համար:

Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ն. Կիրակոսյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

բ/ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքվելուն հաջորդող օրացուցային օրվա ժամը 16:30-ին, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 24, 1-ին մասնաշենք, N25 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ն. Կիրակոսյան

անդամ _____ Մ. Ստեփանյան

քարտուղար _____ Գ. Ձանջուղազյան